

Կեղտաջրերի մաքրման այս տեխնոլոգիան ունի հետևյալ հիմնական առավելությունները.

- ոչ մեծ կապիտալ ներդրումներ, նվազագույն շահագործման ծախսեր,
- մաքրման բարձր արդյունավետություն (կախված մասնիկների և ԹԿՊՏ-ի մինչև 90% նվազեցում),
- էլեկտրաէներգիայի փոքր ծախս,
- չի պահանջվում բարձր որակավորման անձնակազմ,
- շահագործման շենքի կառուցման կարիք չկա:

#### **Նախագծի ավարտին սպասվելիք արդյունքներն են.**

- Կենցաղային կեղտաջրի ԹԿՊՏ-ն 260մգ/լ-ից կնվազի մինչև 40մգ/լ
- կնվազեցվի գյուղատնտեսական հողատարածքների դեգրադացիան,
- կկանխվի տարեկան մոտ 12տ ազոտի և 6տ ֆոսֆորի մուտքը ստորերկրյա ջրեր,
- կարտադրվի մոտ 10/վրկ ռոզման համար պիտանի լրացուցիչ ջրաքանակ, գյուղատնտեսական հողատարածքները կընդլայնվեն մոտ 50ա-ով,
- համայնքի մոտ 100տնային տնտեսություն տարեկան միջինը կունենա 700-1200 ԱՄՆ դոլար եկամուտ՝ կախված նշակվող գյուղատնտեսական կուլտուրայից,
- կապահովվի բնակչության սննդային անվտանգությունը, կապահովվի բարենպաստ շրջակա միջավայր, կբարելավվի բնակչության սանիտարահիգիենիկ պայմանները,
- մաքրման կայանը շահագործելու համար կհիմնվի համայնքային կազմակերպություն,
- կբարձրանա հասարակության իրազեկության մակարդակը բնակավայրում և հողերի կայուն կառավարման վերաբերյալ:

Առաջարկվող ծրագրի իրականացմանը որպես Ազգային ջրային համագործակցություն ՀԿ-ի գործընկերներ մասնակցում են Հարավային Կովկասի և Կենտրոնական ասիայի տարածաշրջանային ջրային համագործակցությունը, Կայուն ջրային միջավայր ՀԿ-ն, ՋԻՆՁ ինժեներախորհրդատվական ընկերությունը, Փարաքարի գյուղապետարանը, «Փարաքար» բարեգործական հիմնադրամը, Ջրային տնտեսության պետական կոմիտեն:

Հասցեն 0037, Երևան, Չոլսյան 38  
Հեռախոս (37410) 209 603  
Էլ-փոստ [cwp\\_armenia@yahoo.com](mailto:cwp_armenia@yahoo.com)  
URL: [www.cwp.am](http://www.cwp.am)



ԱԶՀ Հայաստան

## **ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի դեգրադացված գյուղատնտեսական հողատարածքների վերականգնում՝ կենցաղային կեղտաջրերի մաքրման կենսաբանական լճակի կառուցմամբ**



|                                      |   |
|--------------------------------------|---|
| Իրականացման ժամկետը                  | մարտ 2010թ. - փետրվար 2011թ.                                    |
| Իրականացման վայրը                    | ՀՀ Արմավիրի մարզ, գ. Փարաքար                                    |
| Ֆինանսավորող կազմակերպություն        | Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի Փոքր դրամաշնորհների ծրագիր        |
| Համաֆինանսավորող կազմակերպություններ | Փարաքարի համայնք, ՋԻՆՁ ՍՊԸ ԿԱԿ Գլոբալ ջրային համագործակցություն |
| Ծրագրի ղեկավար                       | Արևիկ Հովսեփյան   |

ԵՐԵՎԱՆ 2010թ.

Ազգային ջրային համագործակցություն (ԱՀՀ) գիտական, էկոլոգիական, ՀԿ-ն հիմնադրվել է 2005թ.-ին, որպես Գլոբալ ջրային համագործակցություն միջազգային ցանցի գործընկեր Հայաստանում:

Ազգային ջրային համագործակցության առաքելությունն է նպաստել ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման սկզբունքների ներդրմանն ու այդ գործընթացի իրականացմանը Հայաստանում:

### Կազմակերպության խնդիրներն են.

- պատահել ջրային ռեսուրսների և շրջակա միջավայրի կառավարման գործընթացին ջրակազմանային/գետակազմանային մակարդակի, հիլ,
- ապահովել ջրային ռեսուրսների կառավարման և պլանավորման գործընթացում հասարակության մասնակցությունը,
- ազգացել ազգային և տարածաշրջանային մակարդակով բոլոր շահագրգիռ կողմերի միջև ջրային համագործակցության ստեղծմանը, մշակել և իրականացնել ջրային ռեսուրսների համապարփակ կառավարմանը, պահպանությանն ու օգտագործմանն ուղղված ծրագրեր և գործիքներ՝ ելնելով ազգային և տարածաշրջանային պահանջներից,
- ապահովել Գլոբալ ջրային համագործակցության և այլ միջազգային կազմակերպությունների և ծրագրերի միջև կապը,
- տարբեր մակարդակներում (ջրակազմանային, ազգային, տարածաշրջանային, միջազգային) կազմակերպել ու ամրապնդել ջրային համագործակցություն,
- նպաստել ջրային ռեսուրսների կառավարման գործընթացի մասին տեղեկատվության տարածմանը, կառավարման համակարգի թափանցիկության ապահովմանը,

Ազգային Ջրային Համագործակցությունը Հայաստանում կամավորության հիմունքներով համախմբել է 19 գործընկեր կազմակերպությունների՝ պետական, հասարակական և մասնավոր սեկտորից փոխշահավետ պայմաններում փորձի հարստացման, տեղեկատվության փոխանակման և ունակությունների զարգացման նպատակով (Գործընկերների մասին տեղեկությունները տես [www.cwpa.am](http://www.cwpa.am) կայքում):

### ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարության գյուղատնտեսական հողատարածքների վերականգնում՝ կենցաղային կերտաջրերի մաքրման կենսաբանական լճակի կառուցմամբ

Շրագրի նպատակն է ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար գյուղի համար (բնակչությունը 10,000մարդ) նվազեցնել գյուղատնտեսական հողատարածքների ղեկավարման և ստորերկրյա ջրերի աղտոտումը, միտժամանակ ապահովել գյուղատնտեսական հողատարածքների կայուն օգտագործումը, բնակչության սննդային անվտանգությունը, վերականգնելով կենցաղային կերտաջրերի հեռացման համակարգը և կառուցելով լագունային տիպի մաքրման համակարգ:

Շրագրի նախատեսվում է իրականացնել 2 փուլերով՝ կախված փուլերի ամբողջականությունից և ֆինանսական միջոցների առկայությունից:

**Շրագրի առաջին փուլում** նախատեսվում է մշակել մաքրման կայանի շինարարության համար աշխատանքային նախագիծ, ստանալ նախագծի քաղաքաշինական և բնապահպանական փորձաքննությունների դրական եզրակացություններ, մինչև մաքրման կայան կառուցել 800մ երկարությամբ 250մն տրամագծով պոլիէթիլեն ջրահեռացման կոլեկտոր և դիտահորեր, իրականացնել կայանի մեխանիկական մաքրման կառուցվածքների և կենսաբանական առաջին լճակի շինարարական աշխատանքները: Այս փուլում նախատեսվում է նաև մաքրման կայանը շահագործող անձնակազմի ուսուցում և համայնքի բնակչության բնապահպանական իրազեկության բարձրացում:

**Երկրորդ փուլով** նախատեսվում է կառուցել կենսաբանական երկրորդ լճակը և այդտեղ զարգացնել ձկնադրյունաբերությունը, ինչպես նաև տրմանդապարակ՝ կենսաբանական լճակներում կուտակվող տիղմի օգտահանման համար, ինչը հնարավորություն կտա համայնքի բնակիչներին ունենալ էժան և որակի օրգանական պարարտանյութ և ստանալ էկոլոգիապես մաքուր արտադրանք: Կենսաբանական լճակներում մաքրված կերտաջրը կլցվի ռոզման համակարգ և կօգտագործվի ռոզման նպատակով: Փարաքարում կերտաջրի մաքրման համար ընտրվել է կենսաբանական լճակի տարբերակը, որը մեծ կիրառություն ունի միջազգային պրակտիկայում: Սակայն Հայաստանում նմանատիպ կառուցվածքներ դեռևս չկան և սա ճարարություն է մեր երկրի համար: Փարաքարի բնակիչմայան պայմանները թույլ են տալիս այս տարածքում շահագործել նմանատիպ մաքրման կայան: Կայանի շահագործման ծավալերը՝ հետևաբար և մաքրման սակագինը, կլինեն նվազագույնը (կերտաջրի մաքրման կլավի մեթոդների հետ համեմատած)՝ միաժամանակ պահպանելով կերտաջրի մաքրմանը ներկայացվող պահանջները: